

## ՀԱՅՐԵՆՆԵՐԻ ԵՎ ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԻ ՄԱՍԻՆ

ԱՍ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Վերջերս Հայպետհրատը լույս ընծայեց «Նահապետ Քուչակ»<sup>1</sup> ժողովածուն: Ժողովածուն ներկայացնողի՝ Ա. Ղուկասյանի մոտ առկա է հեռակալ միտումը. բոլոր հայրենները անվերապահ կերպով համարել են Քուչակի սակեծագործությունը: Որքան հայանի է, այդպիսի եզրակացություն դեռ չէր հանդել այդ խնդրով զբաղվող և ոչ մի մասնագետ. նրանք բոլորն այս կամ այն չափով կասկածել են, թե հայրենների հեղինակը Ն. Քուչակն է: Ել չենք խոսում այն մասին, որ մասնագետների մի մասն էլ հայրենները Քուչակին վերագրելը իրավացիորեն դիտում է որպես թյուրիմացություն: Ուստի Ա. Ղուկասյանի վերահիշյալ միտումը թվում է ուշադրավ. արդյոք նա նոր փաստե՞ր է գտել և նրանց հիման վրա բանասիրական միտքը մղում է ասա՞ջ, թե՞ ընդհակառակը: Փաստերը ցույց են տալիս, որ Ա. Ղուկասյանը ոչ մի հիմք չունի դեթ մի հատիկ հայրեն վերագրելու Ն. Քուչակին: Իրանում համոզվելու համար նախ համոտոտակի վերհիշենք հարցի պատմությունը:

Հայանի է, որ հայրական միջնադարյան պոեզիան ունի մի դոգարիկ ու պատկանելի հատված՝ հայրեններ անունով: Սրանց հնագույն նմուշները գտնվում են միջնադարյան ձևագրերում՝ առանձին շարքերով: Իրենք միջնադարյան գրիչներն էլ մեզ որոշակի չեն հայտնում, թե ովքեր են նրանց հեղինակները, դրանք մեծ մասամբ պահպանվել են որպես անանուն սակեծագործություններ՝ «Հայրենի կարգաւ», «Ճաղ սիրոյ» և նման ուրիշ խորագրերով: Ուշադրավ են հայրենների այն շարքերը, որոնք գրված են այսպիսի վերնագրերի տակ. «Հայրենիք սիրոյ վերայ, ասացեալ ի աշըքներուն»<sup>2</sup>, «Բանք պիտանիք և օգտակարք ասացեալ առաջնոց»<sup>3</sup>, «Հայոց հայերէն վասն ուրախութեան»<sup>4</sup>: Կան նույնիսկ ձևագրեր էլ, որոնց մեջ որոշ հայրեններ երևան են գալիս միջնադարյան տարբեր հեղինակների անուններով. օրինակ, «Հայրենիկ ասացեալ է Թուրկուրանցու ի վերայ սիրոյ»<sup>5</sup>, «Այլ բանք հայրենիք Անտանի ասացեալ»<sup>6</sup>, «Պլուզիքի» (= Պլուզիկի)<sup>7</sup>: Կան հայրենների այն-

<sup>1</sup> Նահապետ Քուչակ. Հայրենի կարգավ, կաղմեց՝ առաջարանով, ծանոթագրու-թյուններով և բառարանով հանդերձ՝ Ա. Ղուկասյան, Երևան, Հայպետհրատ, 1957:

<sup>2</sup> «Անահիտ», Փարիզ. 1932, Գ տարի, № 1—2, էջ 31—39:

<sup>3</sup> Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, ձևագիր № 7057, թերթ 21տ—22ա:

<sup>4</sup> Վենետիկի Մխիթ. միտր. մատենադարան, ձև. № 1361, թերթ 390:

<sup>5</sup> Արտավազդ արքեպ. Սյուրմեյսն, Յուզյակ հայերէն ձևագրաց Հայկայի, Երուսաղեմ, 1935, էջ 382:

<sup>6</sup> Գիլիսի կոչված տաղարան, ունենք լուսանկարը (չնորհակալությամբ ստացել ենք Ա. Տեր-Ղազարյանից):

<sup>7</sup> Վիեննայի Մխիթ. միտր. մատենադարան, ձև. № 671, թերթ 201ա—204բ:

պիսի շարքեր էլ, որոնք հիմնականում գրված են անհաս հեղինակների կողմից և ձեռագրերում պահպանված են Հովհ. Երզնկացու (Պլուզ), Փրիկի, Հովասար Սեբաստացու, Դաշակցի Ավետիքի և ուրիշների անունները կրող խորագրերով: Հայրենների այլ շարքեր կապված են Գր. Աղթամարցու, Զաքարիա Գնանեցու, Պաղասար Դպրի և նույնիսկ «Սողոմոն արքայի» անունների հետ: Հայրենների առաջարքն անցած նմուշներ էլ գիտենք, որոնք պատկանում են XII դարի հեղինակ Ն. Շնորհալուն:

Հենց այսքանը բավական է տեսնելու, որ հայրենների ժառանգությունը չի կարող գրվել ոչ միայն Ն. Քուչակի անվան տակ, այլև անհասարակ որևէ հեղինակի, եթե անգամ այդ մասին ձեռագրերում հանդիպեն նշումներ:

Հայրենների առաջին հրատարակողներն էլ չեն փորձել գրանք դեպիցիլ այս կամ այն հեղինակի անունը կրող վերնագրի ներքո. նրանք այդ սակավագործությունները առավել համարել են «Բանք պիտանիք և օգտակարք, ասացել յառաջնոց»<sup>1</sup>: Հմուտ բանասերներ Ա. Ալիշանը, Ա. Հովհաննյանը, Մ. Միանսարյանը, Գ. Սրվանձառյանը հայրենների նմուշների վրա նայել են որպես անանուն ևսկական, գուսանական երգերի:

Եվ ահա, առաջին անգամ, 1882 թվականին բանասեր Ա. Տեկանցը, հրատարակելով հայրենների մի ընդարձակ շարք, հայտարարեց, որ նրա հեղինակն է XVI դարի աշուղ վանեցի Նահապետ Քուչակը<sup>2</sup>: Ինչպես սպասույթված է, և ինչպես հանգամանորեն կտեսնենք ստորև, Ա. Տեկանցն իր հայտարարությունից համար հավաստի որևէ հիմք չի ունեցել, եթե ունենար անգամ, դարձյալ այդ «հիմքը» բնորոշելի համարվել չէր կարող, ճիշտ այնպես, ինչպես հայրենները չեն կարող ամբողջապես Ն. Շնորհալու, Փրիկի, Պլուզի, Հ. Թվարացու, Անտոնի, Հ. Սեբաստացու, Գր. Աղթամարցու, Պ. Դպրի, Դաշակցի Ավետիքի, «Սողոմոն արքայի» և այլոց անվան տակ գրվել, չնայած այդ մասին կան որոշակի նշումներ:

Ճիշտ է, Ա. Տեկանցի հայտարարությունը դիտվեց որպես անվստահելի, սակայն նրա հիմնադրած թյուրիմացությունը տարերայնորեն, ապա քմահաճորեն խորացավ: Դրա օլիտավոր պատճառն այն էր, որ բանասիրական միտքն այն ժամանակ մեղ մտա նոր էր կազմակերպվում, և հայրենների ու Քուչակի մասին բավարար ավյալներ գեոևս չկային:

Առաջին բանասերը, ինչպես հայանի է, Կ. Կոստանյանն էր, որ 1892 և 1896 թվականներին հայտարարելով հայրենների նոր շարքեր, դրանք համեմատեց Ա. Տեկանցի հրատարակածի հետ և կզրակացրեց, որ նրանց բոլորի սկզբնաղբյուրը ժողովրդական բանահյուսությունն է, իսկ «Նահապետի իսկապես ժողովող է այդ մասերի, այլ ոչ հեղինակ»<sup>3</sup>:

Այնուհետև Հովհ. Թադևոսյանը Մ. Աբեղյանի ցուցմունքով ուսումնասիրեց հայրենները՝ կապելով Վանի և Ալինի ժողովրդական երգերի հետ և հանգեց նույն կզրակացություն: Տարբերությունն այն է, որ Հովհ. Թադևոսյանը միաժամանակ հնարավոր համարեց Ն. Քուչակին վերագրել կրոնա-բարոյա-

<sup>1</sup> «Գիրք պատմութեան, որ կոչի Պղնձէ քաղաք», 1792, էջ 220—223:

<sup>2</sup> Ա. վարդ. Տեկանց, Հայերդ, Թիֆլիս, 1882, էջ ԺԱ—ԺԲ:

<sup>3</sup> Կ. Կոստանյան, Նոր ժողովածու, Ա, Թիֆլիս, 1892, էջ 68—75 և Նոր ժողովածու, Բ, Թիֆլիս, 1896, էջ 44—45:

կան որոշ հայրեններ: Չնայած այս մոտեցմանը, Հ. Թադևոսյանը իր գիրքը վերնագրեց «Քուչակ Նահապետի երգերը»<sup>1</sup>, որով ինքնըստինքյան որոշ օրինականություն տվեց այսպես կոչված քուչակյան տեսակետին:

Համարյա նույն ժամանակ այդ գործին ձեռնամուխ եղավ Ա. Չոպանյանը. նա հավաքեց բազմաթիվ անտիպ հայրեններ և ապագրվածների հետ միասին հրատարակեց «Նահապետ Քուչակի դիւանը»<sup>2</sup> վերնագրի տակ: Ա. Չոպանյանն էլ, Ա. Տեկանցի վկայությունից բացի, որևէ կոնկրետ հիմք չունի, նա ևս մյուսների նման կասկածում էր՝ հայրենները համարելով մերթ ժողովրդական երգեր, մերթ «բազմաթիվ հայ աշուղներու» գործ, մերթ նրանց մեջ տեսնելով Պլուդի ու Ֆրիկի ստեղծագործությունները: Այսուամենայնիվ, նա այդ բոլոր հայրեններն առանց փաստի վերագրեց Ն. Քուչակին:

Ն. Քուչակին նվիրված հաջորդ առանձին գրքույկը հրատարակեց Գ. Ասատուրը՝ 1905 թվականին<sup>3</sup>: Չնայած նա գրում էր, թե «այդ երգերի վերագրվելը Նահապետ Քուչակին պետք է համարել վաղաժամ և ստուգության կարոտ»<sup>4</sup>, այնուամենայնիվ իր գիրքը դրեց «Սիրու երգիչ Ն. Քուչակի երգերը» խորագրի տակ:

Եվ այս չարաբաստիկ խորագրերն ավելի հզոր հանդիսացան, քան իրենց ստեղծող հեղինակների գրած առաջաբաններում անկա բանասիրական մտքերը: Քուչակի անունը տարածվեց, սիրվեց: Գործին մեծապես նպաստեց Ա. Չոպանյանի «Անահիտ» ամսագիրը, որտեղ շուրջ կես դար, աշխարհի տարբեր կողմերից ստացվող բոլոր հայրենները հրատարակվում էին «Քուչակյան նոր տաղաշարք մը» անստույգ վերնագրի տակ: Այս պրակտիկան անցավ նաև «Արեգ», «Բազմավէպ» և այլ պարբերականներին: Նրան տուրք տալ սկսեցին նույնիսկ այնպիսի բանասերներ, որոնք լիապես համոզված էին, որ իրենց հրատարակած հայրենները ոչ մի կապ չունեն Ն. Քուչակի հետ: Օրինակ, նրանցից մեկը «Բազմավէպ»-ում տպագրեց «Քուչակեան նոր տաղաշարք մը», միաժամանակ նկատելով, որ «Այս քառյակները... արտագրություն ըլլալու են ԺԴ—ԺԵ գարու հեղինակի մը» և ինքը «Քուչակյան քառյակներ կասկածելի անունը» տալիս է նրանց լոկ «հետեւելով ընդունված կանոնին»<sup>5</sup>: Այդ կանոնին հետևեց որոշ չափով նաև Ն. Ակինյանը, չնայած նա ևս շուտով համոզվեց, որ հայրենների «Ծագումը կանխադույն է քան ԺԴ գարը. անոնք ըստ մեծի մասին բխած են հայ ժողովուրդի կուրծքեն», և որ նրանց հետ իզուր են կապում «պարզունակ աշուղ Քուչակի անունը»<sup>6</sup>:

Ն. Քուչակի մեծարման տարերային ու անճիշտ այս ընթացքի բնութագիրն է կարծես, որ 1926 թվականին տվել է Ա. Չոպանյանը՝ հայրենների

<sup>1</sup> Հովհաննես Թադևոսյան, Քուչակ Նահապետի երգերը, Թիֆլիս, 1903 (նախապես տպագրված «Ըւումայ»-ում, 1902):

<sup>2</sup> Ա. Չոպանյան, Նահապետ Քուչակի դիւանը, Փարիզ, 1902:

<sup>3</sup> «Սիրու երգիչ Ն. Քուչակի երգերը», մշակեց՝ Գ. Ասատուր, Թիֆլիս, 1905:

<sup>4</sup> Նույն անդում, էջ 4:

<sup>5</sup> «Բազմավէպ», 1932, № 10—11:

<sup>6</sup> Նրա հրատարակած հայրենները գետեղվել են «Նահապետ Քուչակի քառյակները», «Նահապետ Քուչակի անտիպ քառյակները», «Քուչակյան քառյակներ Վիեննայի Մխիթարյան թիվ 671 աղաբանէն», «Անտիպ հայրեն քառյակներ (Նահապետ Քուչակ)» և նման ուրիշ վերնագրերի տակ: («Արեգ», 1924, № 1, էջ 13, № 4, էջ 193, «Զուարթնոց», 1929, «Անահիտ», 1933, № 3—4):

հաջորդ գրքույկի առաջարկում. «Անհնար է, որ ատոնց հեղինակն ըլլա վանցի Քուչակը, ինչպես կը հայտարարե Վ. Տեկանցն... անոնք ավելի ժողովրդական երգերու բնույթ ունին... բայց... ժողովրդական անանուն երգեր շատ ունինք... և ատոր համար անուն մը պետք էր, ահա ինչու Քուչակի անունը պահեցի, և այդ անունը... այդ տաղաշարքին կապված մնաց»<sup>1</sup>:

Հասել էր ժամանակը, որպեսզի գիտական լուրջ ու ծանրախոհ խոսք ասվեր հայրենների մասին: Եվ ահա 1931 թվականին այդ խնդրով զբաղվեց Մ. Արեղյանը<sup>2</sup>: Նա, որ ինքն էլ դարասկզբին մասամբ տուրք էր տվել քուչակյան հոսանքին՝ միաժամանակ հայրենների մեջ նկատելով ժողովրդական ստեղծագործության արունքները, այս անգամ, առաջինը լինելով, հայրենների և Քուչակի հարցը՝ վերջնականապես ազատագրեց ամեն տեսակ կամայականություններից և դրեց գիտական լուրջ հիմքերի վրա: Նա բազմակողմանի փաստերով և խորը տրամաբանություններով հերքեց քուչակյան առասպելը և ապացուցեց, որ հայրենները պատկանում են մի շարք դարերի և մի շարք սերունդների: Մ. Արեղյանին ամենից առաջ հետաքրքրեցին զուստնական ժողովրդական հայրենները, որոնք նա խնամքով հավաքեց և ուսումնասիրեց՝ տալով նրանց առաջին գիտական հրատարակությունը<sup>3</sup>:

Ա. Չոպանյանը, ծանոթանալով Մ. Արեղյանի ուսումնասիրության հետ, հաշիվ անելով իր բազմամյա երկրությունները, իր ձեռքի տակ եղած հարուստ փաստերն ու մյուս բանասերների կարծիքները, կարողացավ զգալիորեն հաղթահարել իր իսկ ամրապնդած քուչակյան տրագիգիան՝ ի գեմս «Հայրեններու բուրաստանը» ժողովածուի<sup>4</sup>: Վերջապես նրա մոտ առաջին անգամ հայրենները դուրս պրծան քուչակյան ճնշող անվան տակից: Իայց, բնականաբար, նա չէր կարող միանգամից հրաժարվել իր կեսդարյա հորդորներից, ուստի նպատակահարմար դատվ այս անգամ հայրենները վերագրված համարել ինչպես Քուչակին, այնպես էլ ուրիշներին: Ըստ որում, Քուչակ ասելով էր, նա խնդրում է հասկանալ ո՛չ թե Ա. Տեկանցի առաջարկած XVII դարի վանեցի աշուղ Նահապետին, այլ որևէ ենթադրական հեղինակի. «...Կր նախընտրեմ Նահապետ Քուչակ անունին կապել և զայն ընդունել գոնե իբր կեղծանուն այն հին մեծ աշուղին, որուն անհատական տաղանդին կը պարտինք այս տաղաշարքին հիմնական ու գեղեցկագույն տարրը»<sup>5</sup> Չեմ հրաժարվում այդ անունից, ասում է նա, որովհետև «այդ քերթողական գանձարանը այսօր ամբողջ հայ ժողովուրդին և միջազգային գրասեր ընտանիքին ծանոթ ու սիրելի է գարձած այդ Քուչակ անունով...»<sup>6</sup>:

Ըստ էության, այստեղ արդեն քարը-քարին չի մնացել քուչակյան տեսությունից, և այն էլ՝ այդ տեսության ամենաեռանդուն պաշտպանի մոտ: Եթե դրան ավելացնենք նաև միջնադարյան վրայությունները, ինչպես և Կ. Կոստանյանի, Հ. Թադևոսյանի, Ն. Ակիսյանի, Տիրայր արքեպիսկոպոսի և, վերջապես, Մ. Արեղյանի ու մյուս մասնագետների կարծիքները, ապա

<sup>1</sup> Ա. Չոպանյան, Հատրնտիր էջեր Քուչակեան տաղաշարքէն, Փարիզ, 1926, էջ 6—7:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Հին զուստնական ժողովրդական երգեր, Երևան, 1931:

<sup>3</sup> Մ. Արեղյան, Գուստնական ժողովրդական տաղեր, Երևան, 1940.

<sup>4</sup> Ա. Չոպանյան, Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 59:

<sup>6</sup> Նույն տեղում:

խնդիրն առավել պարզ կդառնա, այսինքն քուչակյան տեսությունը կմնա որպես լակ իր դարն ապրած և անհիմն մի թյուրիմացություն:

Այսուամենայնիվ, այսօր այդ թյուրիմացությունը որոշ աշխատություններում շարունակում է հարատևել և այդ՝ ոչ թե նոր փաստերի ու փաստարկումների հիման վրա, այլ լակ անցյալի տրադիցիան անհողորեն հարգելու հետևանքով:

Ահա այս պայմաններում է երևան գալիս Ա. Ղուկասյանի կազմած «Նահապետ Փուչակ» ժողովածուն:

Այլժմ ծանոթանանք այն սկզբունքներին, որոնցով առաջնորդվում է Ա. Ղուկասյանը: Ճիշտ է, հեղինակը այս գրքում հանգամանորեն կանգ չի առնում համապատասխան խնդիրների վրա. բայց նա այդ կատարել է ուրիշ աշխատությունների՝ մեջ և նրանց հետևություններն է, որ ամփոփ կերպով, երբեմն էլ ակնարկով, գետնից է այս գրքի առաջարկում ու ծանոթադրություններում: Ուստի վերջիններս կարող են փոքրիշատե մանրակրկիտ քննություն, որովհետև նրանց վրա է խորսխված քուչակյան տեսության նոր պաշտպանությունը:

Ինչպես արդեն նշեցինք, Ա. Ղուկասյանը բոլոր հայրենները անվերապահ կերպով համարում է Ն. Փուչակի գործերը: Բնականաբար, նա պիտի կանգ առներ հին ձևագրական ավյալների, ապա բանասիրական պրպտությունների այն արդյունքի վրա, որոնց մասին խոսվեց վերևում: Անուշեհակ նա պիտի փարատեր քուչակյան տեսության վերաբերյալ այն կասկածները, որ արասնալսել են Ա. Տեկանցից հետո մինչև ինքը՝ բոլոր բանասերները: Սակայն գրքում արդ երկու հանգամանքն էլ լուծված են մասնված: Ի վերջո, նա պիտի հերքեր Մ. Արեղյանի ուսումնասիրության գեթ հիմնական գրվածքները՝ նրանց հակադրելով իր փաստարկումները: Այս գործն ահա, իբր թե, արված է: Ըստ որում, Մ. Արեղյանին ուղղված ամբողջ քննադատությունը սկզբված է մի քանի անհանդուրժելի հայտարարությունների մեջ, ուր նա «չհիմնավորված ու սխալ» է համարում Մ. Արեղյանի՝ քուչակյան տեսությունը մերժող բոլոր անասիկաները: Այդ կապակցությամբ չի մոռանում մի երկու խոսքով քննադատելու նաև Ա. Չոպանյանի այն խոստովանանքները, որոնց մեջ նա ընդունել է Մ. Արեղյանի գրույթների մի մասը:

Ա. Ղուկասյանի ամբողջ ջանքը ուղղված է ապացուցելու, որ Ն. Փուչակը ստեղծագործել է նախ Ակնում և ապա վերադարձվել Վանում: Այս թեզի ապացուցումը նրա համար վճռական նշանակություն ունի հետևյալ պատճառով: Բանասերները վաղուց են նկատել, որ Ակնի անտունիները սերտ առնչություն ունեն հայրենիների հետ: Բայց բոլոր մասնագետներն էլ, այդ հարցը շոշափելիս, ի վերջո Ակնի անտունիները համարել են ժողովրդական երգեր: Միայն Ա. Չոպանյանը մասնակի փորձ արեց անտունիների սրտ շնուշներ վերագրել Ն. Փուչակին: Ահա այստեղից էլ կառչելով Ա. Ղուկասյանը ցանկանում է հարություն տալ քուչակյան տեսությանը և առավել հզորաց-

<sup>1</sup> Նկատի ունենք նրա համանուն դիսերտացիան և մի հոդվածը («Գր. թերթ», 1956, № 2):

<sup>2</sup> Նահապետ Փուչակ, էջ 13. «Սակայն Արեղյանի այդ փորձը կառուցվեց հայրենիների ու Փուչակի հարցում նրա մի շարք կանխակալ, պատմականություններ չհիմնավորված սխալ անասիկաների վրա»:

նել այն: Չնայած որ իր գրքում նա որոշակի չի խոսում այդ նպատակի մասին և անտունիների հարցն էլ մի անգ համարում է գեղեսուսականությունների կարող, սակայն անտունիները ևս Քուչակին համարելու նրա միտումը գրեթե չի և մի քանի ասիթով: Օրինակ, «Հանրահայտ է,—ասում է նա,— որ Քուչակի հայրեններն ամենից ավելի ժողովրդականացել են Ալևում և նրա շրջապատում»<sup>1</sup>: Այսինքն, Ալևի շրջանում գրի առնված անտունիները և Քուչակի հայրեններն են կամ՝ անտունիները Քուչակին են: Նախ, այդպիսի «Հանրահայտ» կարծիք չկա: Անգամ Ա. Չոպանյանը որոշ անտունիներ Գուչակին վերագրելով հանդերձ, գրում է, որ նրանք «մեծ մասամբ... ճշմարիտ ժողովրդական անանուն հին երգեր են... Փոլքուրական արտագրանքներ են...», սակայն թիվ կտրոսներ միայն «երան Ալևա երգեր ըլլալ...»<sup>2</sup>: Հանրահայտ չէ նաև այն, թե հայրենների հեղինակը Գուչակն է: Ահա այդպիսի հայտարարությամբ Ա. Ղուկասյանը հանրահայտ է համարում ոչ միայն հայրենների Քուչակին պատկանելը, այլև անտունիների: Ուստի նրա համար խիստ անհրաժեշտ է գտնում ապացուցել, որ, իբր թե, Ն. Գուչակը սակցածագործել է Ալևում: Այս կրկնակի նպատակին հասնելու համար նա գիտնում է մի շարք ապացույուն մեկնարանությունների: Դրանցից գլխավորը, ինչպես փորձում է հավաստել Ա. Ղուկասյանը, այն «նոր» վկայությունն է, «որն ստեղծվել է Ալևում և իր ետրյամբ մինչև հիմա Քուչակի մասին եղած փաստերից ամենամեծապարբրականն է»<sup>3</sup>: Սուրբ վերաբերում է վաղուց արդեն հայանի հետևյալ առածին. «Աղջիկը իր քեֆին (կամքին) թողուս կերթա քեօչէկը (կաքավող անպարկեշտ պատանի) կտանէ»: Ա. Ղուկասյանի կարծիքով այս առածն ստեղծել են «ակնցիները Քուչակի անվան հետ կապված», իսկ նրա մեջ գանձվող «քեօչէկ» բառը ոչ այլ ինչ է, քան հայրենների լիրիկական հերոսի մականունը և նույնական է Նահապետի «Քուչակ» մականվան հետ: Բայց, որպեսզի նա հարթի այդ բառերի մեջ եղած տարբերությունները, նախ և առաջ, եղծում է Ա. Տեկանցի վկայությունը: Վերջինս գրում է. «որ մականուն աշրջ Քուչակ ասի»<sup>4</sup>, իսկ Ա. Ղուկասյանը ընթերցողին ասում է, որ իբր թե Ա. Տեկանցը գրել է. «որ մականունն աշրջ Քեօչէկ ասի»<sup>5</sup>: Ո՞ւմ է պետք այս աղավաղումը: Ասկայն անցնենք առաջ:

Հարցը նրանումն է, որ Ա. Ղուկասյանի «գլուտը» այնքան էլ նոր բան չէ: Դեռևս 1902 թվականին Ա. Չոպանյանը գրել է. «Քուչակ»-ը հավանականաբար «քեօչէկ» բառին աղավաղումն է, որ երգիչ, նվագածու, պարող կնշանակե»<sup>6</sup>: Վ. Փափազյանը իր «Պատմություն հայոց գրականության» գրքի 1-ին հատորում (էջ 250) 1907 թվականին գրել է. «Քուչակ անունը ծնվել է անշուշտ քեօչէկ (երգիչ, նվագող և պարող) բառից»: Այդ միտքը նշված է նաև Հ. Աճառյանի, Ա. Մալխասյանի բառարաններում և այլ աղբյուրներում: Այլևհետ, այդ բացատրության հեղինակը հետագայում քննադատվելով, հրա-

<sup>1</sup> Նահապետ Քուչակ, էջ 6:

<sup>2</sup> Ա. Չոպանյան, Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940, էջ 87—88:

<sup>3</sup> «Գրական թերթ», Երևան, 1956, № 2 (17 հունվարի): Այդ մասին տե՛ս նաև՝ «Նահապետ Քուչակ», էջ 8—9:

<sup>4</sup> Ա. վարդ. Տեկանց, Հայերգ, Թիֆլիս, 1882, էջ 161:

<sup>5</sup> «Գր. թերթ», 1956, № 2:

<sup>6</sup> Ա. Չոպանյան, Նահապետ Քուչակի դեռանը, Փարիզ, 1902, էջ 15:

ժարվել է իր մեկնաբանությունից. «Քեօչէկ» թուրքերեն բառով ստուգաբանությունն այդ անունին... քննադատավեցավ, այժմ ինձի խորթ կը թվի»<sup>1</sup>: Ա. Չոպանյանը այդ համոզմունքին մնաց նաև «Հայրենների բուրաստան»-ում՝ 1940 թվականին:

Ճիշտ չէ նաև Ա. Ղուկասյանի այն կարծիքը, թե այդ առաժն ստեղծել են ակնցիները՝ Քուչակի անվան կապակցությունը: Առհասարակ դժվար է որոշել, թե ո՞ր առաժը ե՞րբ, որտե՞ղ է ծնվել և ի՞նչ կապակցությունը: Իսկ նման հայտարարություն անելուց առաջ, անհրաժեշտ է նախ փաստարկել այն, և ապա միայն նրա հիման վրա լուծել գրական այնպիսի պրոբլեմ, ինչպիսին է հայրենների հարցը: Բացի դրանից, պարզվում է, որ Ա. Ղուկասյանի մատնանշած աղբյուրից («Հնութիւնք Ակնայ», 1895) ուղիղ 80 տարի առաջ այդ նույն առաժը հայանի է եղել Ակնից շատ հետու գտնվող վայրերում՝ բոլորովին այլ անաքով: 1815 թվականին ելիրևմ կաթողիկոսը, խոսելով ամուսնական խնդիրների շուրջը, գրում է. «Թե ոմանք «Ըստ տաճկացն ասիցեն, թէ «Ազի օզ բաշնայ ղոյաւրն»՝ չալիճիայ վարըր...» և այլն<sup>2</sup>: Իսկ այդ առաժը բառ առ բառ նույնն է, ինչ որ Ա. Ղուկասյանի օգտագործածը. մի՞թե սրա հայրենիքն էլ Ակնն է, իսկ առիթը՝ Քուչակը. հապա ինչո՞ւ «քեօչէկ»-ի անդ «չալիճի» բառն է. արդյոք դա էլ Քուչակի մի ուրի՞շ մականունն է:

Ա. Ղուկասյանն այստեղ ճիշտ չէ նաև այն պատճառով, որ «Քուչակ»-ի տակ անպայման թուրքական «քեօչէկ» բառն է հասկանում՝ առանց խորապես ուսումնասիրելու այն: Մեծանուն հայագետ Հ. Աճառյանն անգամ այդ բառի ծագումը համարեց անծանոթ, չնայած նրան հայանի էր ոչ միայն «Քուչակ»-ը «քեօչէկի»-ի հետ կապող կարծիքը, այլև շատ ուրիշ կարծիքներ: Առհասարակ Քօչէկ, Քուչակ, Քօչակ ձևերը միջնադարում շատ են հանդիպում և պահանջում են հատուկ բացատրություն: Օրինակ, Կիլիկիայի ձևագրերից մեկում 1592 թվականին գրված է. «Յիշեա զՔուչէկն ի տէր, որ ձէթ բերէր, որ վառէի»<sup>3</sup>. մի՞թե այս Քօչէկն էլ ակնցի է և ծնվել է Ա. Ղուկասյանի սված մեկնաբանություն համաձայն:

Այս բոլորը ցույց են տալիս, որ Ա. Ղուկասյանի «ամենահետաքրքրական» փաստարկը քմահաճ է:

Հայրեններ—Քուչակ—Ակն—անտունի թեզն ապացուցելու հաջորդ քայլը, որ կատարված է Ա. Ղուկասյանի կողմից, հետևյալն է. ո՞րն է Քուչակի (այսինքն հայրենների) «ստեղծագործական հայրենիքը»: Որպեսզի ընթերցողին համոզի, թե հայրենները միմիայն Ակնում ևն ծնվել, նա դիմում է հայրենների «բովանդակությունը», նրանց մեջ եղած «դասողություններին», որոնք, ըստ իր կարծիքի, «վերաբերում են Ակնին կամ նրա շրջանին»: Այստեղ էլ, սակայն, ամեն ինչ մտացածին է ու ոչինչ չապացուցող: Լսենք նրա «այսպես օրինակ»-ները:

«Քուչակն իր բազմաթիվ հայրեններում արտացոլել է պանդխտություն (դարիպություն) հետ առնչվող երևույթներ»,—գրում է նա ու թվարկում. «դարիպ մոլորած», «դարիպ կաքվուկ», «դարիպ մեռանի», «կարոտով մեռա-

<sup>1</sup> «Անահիտ», 1930, Բ տարի, № 1, էջ 3:

<sup>2</sup> Հայկ.ՍՍՍՌ Պետ. Մատենադարան, ձեռ. № 3743, թերթ 114բ:

<sup>3</sup> Նույն տեղում, ձեռ. № 6932, թերթ 146բ, ժամանակ 1590 թ.:

նի» և այլն, և ապա եղբայրացնում. «Այս ամենը Ակնի XVI դարի կյանքի բնորոշ կողմերից մեկի ցայտուն պրակտիկան է»<sup>1</sup>: Իսկ ինչո՞ւ միայն Ակնի և այն էլ միայն XVI դարի, և ոչ նաև ա՛յլ դարերի, ուրի՛շ շրջանների, նույն-իսկ հաճախ էլ՝ ո՛րք հայություն:

Ա. Ղուկասյանը հայրենները համարում է Ակնի ծնունդ նաև այն պատճառով, որ հայրեններում կան «զանազան արհեստների և առևտրական հարաբերությունների հետ կապված նրբույթներ» կամ «հայրեններում բազմաթիվ են այդուհի ու զովասուն պարակղին, ծառին ու ծաղկունքին, մրցի զանազան տեսակներին, մասամբ նաև կենդանական աշխարհին վերաբերող արտահայտություններ»: Այս զավեշտը այն տեղն է հասնում, որ նա հայրեններից վերցնելով «չրի ձայնիկն զզգուհուն» արտահայտությունը, բացականչում է. «մի՞թե չի հիշեցնում Ակնի Մեծ ձորի փրփրագեղ ջրերի կամ Քոչան ջրովեժի ձայնը»: Իսկ մի՞թե այս եզանակով հայրենները չի կորելի կապել աշխարհի որևէ ցանկացած բնակավայրի հետ, եթե ախտեղ քիչ թե շատ հոսող ջրեր կան:

Նման «փաստարկումներից» մեկն էլ հայրեններում հանդիպած «հողվարք» բառն է, որովհետև «Ակնի գերեզմանատունը տեղական բարբառով կոչվել է հողվարք»<sup>2</sup>: Մեկնարանը չգիտի կամ չի ուզում տեսնել, որ «հողվարք»-ը միջնադարում որպես գերեզմանավայր շատ տարածված է եղել առհասարակ: Ֆրիկի բանաստեղծություններից մեկի խորագրում կարգում ենք. «Անցաւ ի տաճիկ հողվարքն և սասց ողբ...»<sup>3</sup>: Մսքին Քերովրեն ևս հողվարքով անցել ու ողբ է գրել. «Երէկ հողվարքի անցա»<sup>4</sup>: Մի՞թե այս հեղինակներն էլ ակնցիներ են:

Ահա այսպիսի փրփուրներից է, որ կառչում է Ա. Ղուկասյանը և հայտարարում. «Այսպես, ուրեմն, մեր կարծիքով Քուչակի ստեղծագործության պատվանդանը, սնուցիչ աղբյուրը Ակնի և նրա շրջապատի կյանքն է XVI դարի առաջին տասնամյակներին»<sup>5</sup>:

Վերևում նշվեց, որ Ա. Ղուկասյանը շրջանցել է միջնադարյան ձևագրերին ու մասնագետների կարծիքներին գիմելու անհրաժեշտությունը: Սակայն, հավանաբար, այս հանգամանքը մի կերպ ծածկելու նպատակով, ձևագրական վիպությունների փոխարեն նա վերապատմել է մի քանի դրույցներ Քուչակի մասին, իսկ մասնագետների փոխարեն՝ հիշել է այնպիսի հեղինակների, որոնցից և ոչ մեկը Քուչակի ու հայրենների հարցով մասնագիտորեն չի զբաղվել: Վերցնենք դրույցների և առասպելների հարցը: Իբրևք, հիմնականում, շինծու դրույցներ են՝ թխված բախտախնդիր Հալի Աճեմյանի կողմից, որը նման ձևով թխել է նաև «քուչակյան» 6 հայրեն և նա չիտի մի տապանագիր, որի համաձայն «Ֆրիկը» «Ֆրոֆրոիկ» է և Սաչատուր Կեչառեցու մականունը: Սկզբնական շրջանում ոչ միայն նա, այլև ուրիշ հեղինակներ, երբեմն էլ անմեղ թյուրիմացություններ, սկսեցին տարածել Քուչակի՝ որպես

<sup>1</sup> Նահապետ Քուչակ, էջ 6:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 330:

<sup>3</sup> Բրիտանական թանգարան, ձեռ. № 2622, Բողլյան զրատուն, ձեռ. № 21:

<sup>4</sup> Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, ձեռ. №№ 8968, 3162, 7707 և այլն:

<sup>5</sup> Նահապետ Քուչակ, էջ 9:

<sup>6</sup> Հ. Աճեմյան, Ծագվաբաղ..., 1917, էջ 91—96, տե՛ս նաև Մատենադարան, արխիվ Տիրայր արքեպիսկոպոսի ֆոնդ:



հայրենների հեղինակի մասին գանազան գրույցներ: Օրինակ, Խրիմյան Հայրիկը 1904 թվականին Գ. Ասատուրին պատմել է մի ավանդություն՝ վերագրված Քուչակի կյանքին<sup>1</sup>: Ասկաջն նույն ինքը՝ Խրիմյան Հայրիկը այլ մամուլի մոտացած է եղել, որ դրանից 10 տարի առաջ այլ նույն գրույցը շարադրել է իր «Պապիկ և թոռնիկ» գրքում (էջ 163-166)<sup>2</sup> որպես «Աշուղ Մուշոս»-ի հետ կատարված զեպր: Մի այլ առիթով նա ուղղակի հայտարարել է, որ իբր թե «Կոտուհի, ուստի՞ կու դաս»-ի հեղինակն էլ ն. Քուչակն է<sup>3</sup>, սակայն ընդ մոլորություն, որին նույնպես հետևում է Ա. Կուկասյանը<sup>4</sup>:

Թե՛ Տեկանցի, թե՛ Աճևմյանի, թե՛ Խրիմյանի և թե՛ ուրիշների, որպես վանկերների, Քուչակին մեծարելու նեղ «հայրենասիրական» այս եղանակը ո՛չ մի նշանակություն չի կարող ունենալ գիտական փոքրիշատի լուրջ պրոբլեմ լուծելիս:

Անգրագետներ Ա. Կուկասյանի մասնանշած հեղինակներին՝ «Երական թերթ»-ում նա տկնարկել է Հ. Թումանյանին, Վ. Բրյուսովին, Ե. Չարենցին, իսկ «Նահապետ Քուչակ»-ի մեջ՝ «Ընտիր էջեր» կազմողներին<sup>5</sup> ու խմբագրողներին: Ասկաջն այս բոլորից և ոչ մեկը հայրենների բանասիրությունը չի գրադվել: Ուստի ավելի վկայակոչումը ինքնին իզուր է, մանավանդ, որ «Ընտիր էջեր»-ում (էջ 10-15) հայրենները և անտունները գիտված են նաև որպես գուսանական սակզագործություններ: Աշուղրազվ է Ե. Չարենցին վկայակոչելը: Հանրահայտ է, որ նա 1920-21 թվականներին գրել է «Նարեկացու», Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա՝ Բայց փաստերը ցույց են տալիս, որ մեծանուն բանաստեղծը իր հասունացման շրջանում չըջորին գրադվել է այլ խնդրով և նրա մասին կազմել հստակ պատկերացում: 1932 թվականին գրած «Բովբ խաղողի, գինու և գեղեցիկ զպրություն» բանաստեղծության մեջ նա հայրենները գիտում է որպես ժողովրդական ու գուսանական սակզագործություններ: Այնուհետև խոսելով հայրենների, անտունների և առնասարակ հին ժողովրդական սաղերի մասին, բանաստեղծը որպես նրանց հետ կապված հեղինակների հիշում է միայն Նաղաշ Հովնաթանին ու Սայաթ-Նովային՝ իսպառ մոտացություն տալով Նահապետ Քուչակին<sup>6</sup>:

Ա. Կուկասյանն չափն տեղն է հասել, որ ցանկանում է հայրենների «հայրեն» կոչումը և նրանց տաղաչափությունն էլ բխեցնել Ակնից ու Քուչակից: Անտեսելով հին ու հարուստ փաստերը, նա լուր հայտարարությունը պնդում է, որ իբր թե «հայրեն» կոչումը ծնվել է Քուչակի՝ «հեղինակի կողմից» և ապա՝ «հեղինակին մամուլականից ու հետագա սերունդներն այլ անունով էլ ընդունել և ճանաչել են այլ երգերը»<sup>7</sup>: Գալով հայրենների տաղաչափությունը, նա նորից հայտարարությունը մխտում է Մ. Արեղյանին, առաջ քա-

<sup>1</sup> Սիրու երգիչ ն. Քուչակի երգերը, մշակեց՝ Գ. Ասատուր, Թիֆլիզ, 1903, էջ 8:  
<sup>2</sup> «Արձագանք», 1893, № 1:  
<sup>3</sup> Նահապետ Քուչակ, էջ 131:  
<sup>4</sup> Հյուսյան Մ., Մեկիր-Օսմանյանյան Կ., Մուրադյան Հր., Մուրադյան Ն., Տարոնցի Ա.:  
<sup>5</sup> Երիզորյան Հր., Չարյան Ն., Չարյան Ռ., Զորյան Ա., Թոփչյան Էդ., Իսահակյան Ավ.:  
<sup>6</sup> Օրիշա է. Հ. Թումանյանն ունի ն. Քուչակին նվիրված ուշագրավ էջեր, ոսկայն նա այդտեղ բննարկել է ոչ թե հարցի բանասիրական կողմը, այլ գնահատական խորը և սակ հայրենների մասին:  
<sup>7</sup> Ե. Չարենց, Գիրք ճանապարհի, Երևան, 1933, էջ 133-137:  
<sup>8</sup> Նահապետ Քուչակ, էջ 131:

շեղով այն սխալ միտքը, որի համաձայն հայրեններն իբր թե հատուկ տաղաչափությամբ չեն հորինված: Բայց նման գիտողություններին չարժե իսկ պատասխանել. ասենք միայն, որ Մ. Արեղյանն այդ հարցերին տվել է սպառնիչ պատասխան<sup>1</sup>:

Այժմ մի քանի փաստերով ցույց տանք, թե ինչու բռնի կերպով Ն. Քուչակի, Ակնի և XVI դարի արձևատական նեղ շրջանակների մեջ մտցված հայրենները, ինչպես Մ. Արեղյանն ու արիշներն են ասել, ստեղծադրություն են տարրեր դարձրել, տարրեր վայրերի և տարրեր հեղինակներ:

Վերջինս Ն. Քուչակին արված «Յոնա-խրատական հայրենների» հետևյալ նմուշը.

Երկուս բնդ իրար կովին,  
Մեկ ի մեկ իսկի չի նմանին,  
Մեկ էլ ի նոցա միջին  
էր մեռած ՚ւ անկած ի տեղին.  
Այն ոք, որ դիտիմս արին,  
Շատ արլուն ի վայր թափեցին.  
Ի ի յայն արինն ցողին  
Շունչ տվա՛մ անկած մեռելին,  
Ծեր մ'ալլ բարեխոս բերին,  
Ար հագաղ զերես մեռելին,  
Ե՛վ յայն համբուրե ծերին  
Լոյս ծագլաց մթան զիշերին<sup>2</sup>:

Հավաստի բազմաթիվ փաստերը ցույց են տալիս, որ այս ստղերի հեղինակը ոչ թե Ն. Քուչակն է, այլ XII դարի բանաստեղծ Ն. Շնորհալին: Իրա անտարկելի ապացույցը կարող է լինել, օրինակ, XIII—XIV դարերի հեղինակ Մխիթար Անկյու ինքնագիր ժողովածուն, որտեղ, ի շարս Ն. Շնորհալու հանելուկների, ասկա է նաև այս հայրեն-հանելուկը: Ահա այն.

Երկուք բնդ իրար կովին,  
Մէկէմէկ իսկի չնմանին.  
Մէկ մ'ալլ ի նոցա միջին  
է մեռած ՚ւ ընդած ի տեղին.  
Այն ոք, որ դիտին արին,  
Շատ արին ի վայր վաթեցին.  
Ի ի յայն արունին ցողէն  
Շունչ տվաւ բնգած մեռելին.  
Ծեր մ'ալլ բարեխոս բերին,  
Համբուրեց զերես մեռելին,  
Ի յայն համբուրել ծերին  
Լոյս ծագեց մթման զիշերին<sup>3</sup>:

<sup>1</sup> Մ. Արեղյանը հայրենների հարցում ունի նաև այնպիսի գրույթներ, որոնք վերանայման կամ ճշգրտման կարիք ունեն: Այստեղ մենք դրանք նկատի չունենք:

<sup>2</sup> Ն. Քուչակ, էջ 288 (այս գրքից բերված բազմաթիվների ուղղագրությունը պահպանված է նույնությամբ):

<sup>3</sup> Հայկական ՍՍՏՊ հետ. Մատենադարան, ձեռ. № 2961, թերթ 239ա, ժամանակ՝ XIII—XIV դդ.:

Այս նույն նամաշը առկա է Ն. Շնորհալու հանելուկների նաև ուրիշ շարքերի մեջ<sup>1</sup> համապատասխան մեկնություններով: Ըստ որում հանելուկը նվիրված է «հրահան»-ին. երկու կովոդները կայծքարն ու պողպատն են, նրանց միջև ընկած մեռելը՝ հարեթը, թափվող արյունը՝ կայծերը, մեռելին շունչ ավելի ցողը՝ կրակը, իսկ բարեխոս ծերը՝ ծծումբը՝ «քիւրդն» է, որով կրակ ստանալու պրոցեսն ավելի զլուրին է դառնում:

Չնայած Ա. Դուկասյանը հաճախ խոսում է նաև Մատենադարանի ու ձեռագրերի անունից, բայց և այնպես նա կարող էր ձեռագրական այսպիսի վկայությունների ծանոթ չլինել: Աննեթի է սակայն, որ նա բավականաչափ հող չի տարել գոնև տպագիր գրականությունը ծանոթանալու: Դեռևս 1512—1513 թվականներին հրատարակված հայերեն առաջին տպագրանում առկա է այդ նամաշը՝ նորից Ն. Շնորհալու անվամբ:

Ըստ Ա. Դուկասյանի՝ Ն. Քուչակինն է նաև հետևյալ հայերենը.

Տեսա իմ հոգույս հոգին,  
Որ մեռաւ ի հող թաղեցաւ.  
Դարձյալ իմ սիրուս համար  
Նա հարյաւ ու շատ դատեցաւ.  
Ի սուր լի կտուր երևի  
Ու քարով նա քարկոծեցաւ.  
Ի հուր լի գեհննի մտաւ,  
Իմ հոգույս հոգի շահեցաւ<sup>2</sup>:

Այս օրինակի հեղինակն էլ ոչ թե Ն. Քուչակն է, այլ Ն. Շնորհալին: Այստեղ ևս գործ առնենք հայերեն-հանելուկի հետ՝ այս անգամ նվիրված «ցուրեան»-ին: Հոգու հոգին՝ ցորենն է (անունը), սրբ «ի հող» թաղվելով (ցանքս), նորից հարուժվուն է առնում (ծլում), հետո սրով կարվում (հունծ), քարկոծվում (կայտվում, աղացվում), ապա՝ «ի հար գեհննի» (թոնիր, փուռ) մտնելով դառնում հոգու հոգի (հաց—անունը): Այս հանելուկ-հայերենն էլ կա բազմաթիվ ձեռագրերում, օրինակ.

#### Ց ո ռ ե ա ն

Տեսալ զիմ հոգույս հոգին,  
Որ մեռաւ լի հող թաղեցաւ,  
Դարձեալ իմ սիրոյս համար  
Նա յարեաւ և շատ դատեցաւ,  
Սրովն ի կտուր երևի,  
Նւ քարով նա քարկոծեցաւ,  
Ի հուր գեհննի մտաւ,  
Իմ հոգույս հոգի շահեցաւ<sup>3</sup>:

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, ձեռ. №№ 695, թերթ 410աբ, 2361, թերթ 327բ, 4283, թերթ 22ա, 5624, թերթ 103բ--104ա, 5128, թերթ 222ա և այլն):

<sup>2</sup> Նահապետ Քուչակ, էջ 254:

<sup>3</sup> Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, ձեռ. № 5128, թերթ 221բ, Ժամանակ 1635 թ., խորագիր. «Տեսան ներսէնի հայոց կաթուղիկոսի ասացեալ է դատակքս վասն ուրախութեան մարդկան»: Տե՛ս նաև ձեռ. № 7703, թերթ 100բ և այլն:

Ինչպես կարելի է այս ստեղծագործությունները կարելի XII դարից, Կիլիկիայից, Ն. Շնորհալուց և բունի կերպով դնել XVI դարի, Ակնի ու Ն. Քուչակի շինծու շրջանակի մեջ:

Ձևագրերում կան Ն. Շնորհալու, Հ. Երզնկացու և ուրիշների անվամբ պահպանված նման ուրիշ հայրեն-հանելուկների ևս. դա հայրենների մի նոր բնագավառ է՝ կապված ժողովրդական ակունքների հետ, որի վրա ցարդ պատշաճ ուշադրություն չի դարձվել: Իրանք պետք է հանգամանորեն ուսումնասիրվեն և ոչ թե քմահաճորեն արվեն Քուչակին:

Ա. Ղուկասյանի համաձայն, Ն. Քուչակին է նաև հետևյալ պակասավոր հայրենը.

Մտիկ դու հուսանն արա,  
Որ թապաթ, օրոց շինն նա.  
Մեկն դա՝ մեկն երթա,  
Նա յուր բան պակաս չի մա<sup>1</sup>:

Փաստերը, սակայն, այլ բան են ցույց տալիս: Ն. Քուչակի ժամանակակից բանաստեղծ Հովասար Սերաստացին ունի հայրենների մի շարք, որի յուրաքանչյուր տունն սկսվում է «Աշխարհիս սահման է հանց» ստղով: Ահա այդ շարքի առաջին տան մի մասն է վերահիշյալ թերի հայրենը: Ամբողջ տունը Հ. Սերաստացու ինքնագիր համարվող ձևագրում ունի հետևյալ տեսքը.

Աշխարհիս սահմանն է հանց,  
Հեա լցւի ու հեա թէրէնայ,  
Կու թեթեացնէ զիր բեան,  
Որ ով դա՝ շալիկ կարենայ.  
Մտիկ դու հուսանն արա,  
Որ տապան՝ ու օրոցն շինէ նայ.  
Որ մէկն երթայ, մէկն գայ՝  
Իր բանն պաթալ չի մա<sup>2</sup>...

Խնդիրը, սակայն, այսքանով էլ չի ավարտվում, որովհետև այդ հայրենը սակա է նաև Փահլավ թագավորի պատմություն մեջ՝ որպես կաֆա, իսկ այդ պատմության կաֆաներն էլ, ինչպես պարզվում է, իրենց հերթին կապվում են Ֆրիկի անվան հետ<sup>3</sup>:

Ա. Ղուկասյանի կողմից անվերապահորեն Ն. Քուչակին են վերագրվել նաև տասնյակ այնպիսի հայրեններ, որոնք պատկանում են XIII—XIV դարերի հեղինակներ Հ. Երզնկացուն, Ֆրիկին և ուրիշներին:

Այստեղ, այս կապակցությունը, բավական համարենք հիշատակել լոկ այն, որ այդ հայրենների մի քանի տասնյակ օրինակները՝ Հ. Երզնկացու անվամբ՝ գտնվում են XV դարի № 7773 ձևագրում, այսինքն ընդօրինակվել են Քուչակի ծննդից շուրջ մեկ դար առաջ (այդ մասին կխոսվի ստորև):

<sup>1</sup> Նահապետ Քուչակ, էջ 317:

<sup>2</sup> «Արարատ», 1918, էջ 269—270:

<sup>3</sup> Առաջին անգամ նկատվող այս երևույթի մասին ունենք առանձին ուսումնասիրություն (անտիպ):

Արդ, ի՞նչպես կարելի է գրանք կստանալիս հաճարել և անհամաձայնություն նախատել Մ. Արեղյանին, որն իրավացիորեն այդպես չի վարվել:

«Նահապետ Վաչակ» ժողովածուի մեջ ասկա են նաև այնպիսի հայրենիներ, որոնք իրենցից ներկայացնում են հին ծիսակենցաղային բուն ժողովրդական հայրենների մնացուկներ և նորից ոչ մի կապ չունեն Ն. Վաչակի հետ: Այդպիսի հայրենիների նմուշներից է, օրինակ, հետևյալը.

Ի՞նչ մալր է գքեզ բերեր,  
 Ի՞նչ գալակ գքեզ սնուցեր.—  
 Զքեզ եզն ի սարին բերեր,  
 Ու շահեն բազան սնուցեր.  
 Լուսինն քեզ ծիծ ալեր,  
 Արեգակն է դագրեցուցեր.  
 Կամին տարտեր արբեր,  
 Սուրբ կոսանքն օրոր սասցեր<sup>1</sup>:

1608 թվականին Դրվմամ Սաչգուզ անունով մի զրիչ զրի է ասել իր մանկութան օրերին սովորած ժողովրդական մի շարք ռատիկեր և հայրենիներ, որոնց մեջ կան այս հայրենի երկու խիստ տշաղրավ նախօրինակներ: Երկուսն էլ ավելի բնագրծակ են և ունեն հարուստ կրկնակներ ու կրկնումներ: Բացի գրանից, նրանք կապվում են կնունքի ծիսական հին արարողությունների հետ՝ որպես համապատասխան բանաձևեր: Նրանցից մեկի մեջ նույնիսկ կա հին կախարդա-հմայական բանաձևերի ռատիկաներ՝ «այս անուն» նշումը: Իսկ այդպիսի նշումը ցույց է տալիս, որ համապատասխան բանաձևը օգտագործվել է ոչ թե մի անհատի, այլ սերունդների համար՝ միշտ «այս անուն»-ը փոխարինվելով ավելի անհատի անունով: Ստորև ներկայացնում ենք այդ հայրենիները (ընդգծում ենք բուն հայրենի տողերը, բաց թողնելով կրկնակները, կրկնումները և ձայնարկությունները).

\* \* \*

Ա՛յ, իմ աւտովածաւտուր, ա՛յ, կըտրիւն,  
 Էղաւզ, օ՛յ,  
 Ապա ո՞ր մար, որ գրեզ բերել.  
 Ընկալ, օ՛յ,  
 Թէ զիւնք՝ մարդ-մարըն չէ, ա՛յ, բերել,  
 Էղաւզ, օ՛յ,  
 Ոչ կնիկ դայեկ սընուցեր,  
 Ընկալ, օ՛յ,  
 Թէ եզն ի մօրին, ա՛յ, բերել,  
 Էղաւզ, օ՛յ,  
 Երկազվին կարով սընուցեր,  
 Ընկալ, օ՛յ,  
 Ասաղուը իր օրօրքն, ա՛յ, տըւել,  
 Էղաւզ, օ՛յ,

\* \* \*

Թագաւո՞ր իմ ոսկի,  
 Թագաւո՞ր իմ ոսկի.  
 Ա՛յ, կըտրիւն, անախ ո՞ր,  
 Իմ պարոն Ակնարիկոս,  
 Մարըս գրե բերել:  
 Թէ զիւնք՝ մարդ-մարըն չէ,  
 Թէ զիւնք՝ մարդ-մարըն չէ,  
 Ա՛յ, բերել, ոչ կընիկ,  
 Իմ պարոն Ակնարիկոս,  
 Գայեկ սընուցեր:  
 Թէ զիւնք եզն ի մօրին,  
 Թէ զիւնք եզն ի մօրին,  
 Ա՛յ, բերել, իրկաթին,  
 Իմ պարոն Ակնարիկոս,

<sup>1</sup> Նահապետ Վաչակ, էջ 74:

Լուսնիկան ի լուսն է հաներ,  
 Ընկալ, օ՛ր:  
 Յիսուս ինքնասան, ա՛յլ, եղեր,  
 Էդօյտէ,  
 Որդանան գեաբն մըկըրաել,  
 Ընկալ, օ՛ր,  
 Կընքել, իր անուն, ա՛յ, դրել,  
 Էդօյտեղ,  
 Այս անուն, մեր նոր րագաւոր,  
 Ընկալ, օ՛ր:

Կարով սընուցեր:  
 Թէն աստղունք ինքն օրօրքն,  
 Թէն աստղունք ինքն օրօրքն,  
 Ա՛յ, աբել, լուսնիկան,  
 Իմ պարոն Ակնարիկոս,  
 Ի լուսն է հանել:  
 Թէ Յիսուս ինքնասան,  
 Թէ Յիսուս ինքնասան,  
 Ա՛յլ, եղեր, Որդանան,  
 Իմ պարոն Ակնարիկոս,  
 Գեան մըկըրաել:  
 Կընքել, իւր անունն,  
 Գընքել, իւր անունն,  
 Ա՛յ, դրել իմ ըրգաց,  
 Իմ պարոն Ակնարիկոս,  
 Մեր նոր րագաւոր<sup>2</sup>:

Իրենց ամբողջուրյամբ այս եզակի նմուշները<sup>3</sup> մեր առջև րացում են հայրենների մի նոր բնագավառ, դա ժողովրդական հին ծիսական հայրենների բնագավառն է, որակցից մեզ հասել են որոշ բեկորներ. դրանցից մեկն է ահա ն. Քուչակին վերագրված վերահիշյալ նմուշը:

Ժողովրդական հին հայրենների հետ է կապվում նաև հետևյալ օրինակը.

...Քո յարն ի Պառոսա քաղաք,  
 Ես տեսաք ի մեջ շուկային,  
 Ձեռիտնքն է դալալ ավել  
 Ան նստել առջև գնողին.  
 «Քնո՛ղ, գնե՛, մի՛ վախել,  
 Վա՛յ հազար իմ կորսընողին<sup>4</sup>:

Այս նմուշի ավելի ընդարձակ ու հին օրինակը սահպանված է № 697 ձևադրում.

...Քո ձագն ի Անի տեսալ,  
 Ի Անի ու սուրբ Նշանի.  
 Քո ձագա ի ծախողին կրկին՝  
 Կու նայեր ի դէմ գնողին.  
 — Ծախեցէք ու մի վախէք,  
 Վալ հազար իմ կորսընողին:

Ինչպես տեսնում ենք, այս հայրենը կապ ունի Անի քաղաքի շին օրերի հետ, որոնք ընդհատվեցին XIV դարում. հետևապես նրա հնությունը պետի որոնել X—XIV դարերի սահմաններում<sup>5</sup>:

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, ձեռ. № 7709, թերթ 124ա (տե՛ս «Հայկ. միջն. ժող. երգ.», էջ 126—127):

<sup>2</sup> Նույն տեղում, թերթ 94ա—94բ (տե՛ս «Հայկ. միջն. ժող. երգ.», էջ 124—125):

<sup>3</sup> Մեզ հայտնի են նման ուրիշ հայրեններ ևս (տե՛ս «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» ժողովածուի մեջ):

<sup>4</sup> Նահապետ Քուչակ, էջ 224:

<sup>5</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս «Հայկական միջնադարյան ժող. երգեր»-ում (երգը 206-րդ էջում, բացատրությունը՝ 523—533-րդ):

«Նահապետ Քուչակ» ժողովածուի մեջ են մտել նաև բազմաթիվ այսպիսի հայրեններ, որոնք առնված են հնից եկող առանձին երգերից (որպես բեկորներ), վաղ շրջանի բանաստեղծների գրած հայրեններից, զանազան անանուն երգիչների ստեղծագործություններից և այլն:

Սակայն անգրագառնանք մի այլ կարևոր ինչդրի, որի պարզաբանմամբ ինքնըստինքյան առավել հստակ կերևա Ա. Նուկասյանի թափած ջանքերի անհիմն ու կամայական բնույթը:

Հայրենների և Նահապետ Քուչակի հետ կապված շփոթությունը պարզելու տեսակետից վճռական և որոշիչ նշանակություն ունի Ա. Տեկանցի հրատարակած շարքի բանասիրական վերլուծությունը, որովհետև այդտեղից է իր սկիզբն առել քուչակյան տեսությունը: Հերքել այդ շարքի՝ Ն. Քուչակի ստեղծագործություն լինելը՝ նշանակում է հերքել քուչակյան ամբողջ տեսությունը:

Առաջին հարցը, որ ծագում է այդ կապակցությունից, հետևյալն է. ի՞նչ հիմքի վրա է Ա. Տեկանցը նշված շարքը վերագրել Ն. Քուչակին: Ինչպես արդեն ցույց է տվել Մ. Աբեղյանը, նա գրա համար որևէ ընդունելի հիմք չի ունեցել<sup>1</sup>: Հիրավի, որպես կանոն միջնադարյան որևէ ստեղծագործության հեղինակին ճանաչում ենք կա՛մ տվյալ գործի խորագրում, կո՛մ նրա որևէ սողում և կա՛մ ակրոստիքոսում եղած համապատասխան նշումից: Լրացուցիչ կարգով հարցին օգնում են հավաստի ուրիշ աղբյուրներում եղած փաստերը և տվյալ հեղինակին անառարկելիորեն պատկանող ու նրան վերագրվելիք ստեղծագործությունների մեջ սակա հոյր կովանները (ըստ որում այդ բոլորն էլ, բացի ակրոստիքոսից, կարող են դարձյալ ճիշտ չլինել): Հետևապես Ա. Տեկանցի տպած շարքում և նրա բերած տվյալներում պիտի լինե՞ր նման որևէ փաստ: Այդպիսի բան սակայն այդտեղ բոլորովին չկա: Այլևհին, ինչպես ցույց է արված Ս. Աբեղյանի կողմից, ինքը Ա. Տեկանցը «Հայերգ»-ի ճյուղերը ընկալելու և ապագրության ողջ բնթացքում ոչ մի միտք չի ունեցել հայրենների նշված շարքը Ն. Քուչակինը համարելու: Նա այդ մտքին հանգել է միայն հետագայում, երբ ժողովածուի նյութերի տպագրությունն արդեն ավարտված է եղել և հերթը հասել է ստաջարանին: Դա պարզ երևում է հետևյալ փաստից: Այն բանաստեղծությունների տակ, որոնց հեղինակները Ա. Տեկանցին ծանոթ են եղել բանաստեղծությունները տպագրելուց առաջ, նա գրել է հեղինակների անունները («Մկրտիչ»—էջ 1, «Ներսես Կլայեցի»—էջ 2, «Տէր Սաղազալ»—էջ 6, «Ներսէս»—էջ 6, 15, «Սրիկ Կոստանդ»—էջ 10, «Յովհաննէս»—էջ 11, «Ներսէս կաթողիկոս»—էջ 16, 21, «Անդրէաս վարդապետ»—էջ 22, «Սաչ Կեչ»—էջ 25 և այլն): Հետևաբար, եթե այդ ժամանակ նրան հայտնի լինե՞ր, որ հայրենների հեղինակն էլ Ն. Քուչակն է, ապա այդ շարքի տակ պիտի գներ նրա անունը, մինչդեռ այդտեղ ոչ մի անուն չկա: Ժողովածուի նյութերը տպելուց հետո է միայն, որ երբ հերթը հասել է ստաջարանի տպագրությանը (դա երևում է ստաջարանի այլ թվանշաններով կատարված էջակալումից), նա որոշել է այդ շարքը հանձնել Ն. Քուչակին: Կնշանակի, Ա. Տեկանցի օգտագործած ձեռագրում նահապետ Քուչակի մասին ոչ մի տվյալ չի եղել: Մնում է ենթադրել, թե դուրս հետո ա՛յլ աղբյուրներից է նա այդ մասին տեղեկացել: Սակայն նման աղբյուրի գոյու-

<sup>1</sup> Մ. Աբեղյան. Հին գուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1931, էջ 9—15:

թյունն էլ չի ապացուցվում, որովհետև եթե այդպիսին լիներ, ապա նա բնականաբար մեջ կրերեր այդ վիայությունը, մանավանդ, որ վիայակոչել է այնպիսի երկրորդական փաստեր, որոնք նման փաստի գոյությունը զեպքում կարող էին մեջ բերվել սոսկ լրացման կարգով:

Հետևությունը միանգամայն պարզ է: Ա. Տեկանցը «Այս ժողովական գիշերս ի բուն» շարքը Ն. Քուչակի անվան տակ է գրել սեփական ցանկությունամբ կամ գուցե նաև ենթադրությունամբ: Մի բան, որը դիտական սկզբունքի հիմք դառնալ չի կարող, որովհետև, ինչպես ցույց են տալիս փաստերը, նա չարաչար սխալվել է:

Կա մի ուրիշ մոմենտ ես: XVI դարում, իրոք, եղել է վանեցի (Սառահունիս գյուղացի) մի աշուղ՝ Նահապետ Քուչակ անունով: Նրա մի շարք սանդաղադրությունները, որոնցից ոչ մեկը հայրեն չէ, պահպանվել են ձեռագրերում և բոլորն էլ կրում են նրա անունն ու մականունը: Արդ, ինչո՞ւ ժողովուրդը միջին դարերում Նահապետ Քուչակին միշտ ճանաչել է որպես այդ համեստ երգերի հեղինակ և երբեք չի հիշել նրան որպես այնքան հուշակալոր հայրեններն սանդոդի: Ավելին, ինչո՞ւ ժողովուրդն այն ժամանակ այդ հայրենները կապել է մերթ հայ ժողովրդի («Հայոց հայրեն»), մերթ բազմաթիվ երգիչների («Ի աշքեններուն»), մերթ հետավոր անանուն անձանց («Երասչնոց»), մերթ բազմազան հեղինակների հետ և ոչ մի զեպքում ոչ մի ակնարկ չի արել Նահապետ Քուչակի մասին, մանավանդ, որ նրանց մի մասն ընդօրինակվել է Քուչակի կենդանության ժամանակ: Պատասխանը պարզ է. միջնադարիները ծանոթ լինելով և՛ հայրեններին, և՛ Նահապետ Քուչակին, հայրենները նրա հետ չեն կապել, որովհետև իրականում հայրենները նրանը չեն: Ուստի հենց այսքանն էլ բավական է, որպեսզի մերժվի Ա. Տեկանցի հայտարարությունը:

Այժմ փորձենք խնդրին մոտենալ ուրիշ կողմից:

Կարո՞ղ է այդ շարքը իր եռաթյամբ կապվել Ն. Քուչակի հետ:

Ինչպես Ա. Տեկանցն է վիայում, նրա հրատարակած հայրեններն ընդօրինակված են մի ձևադրից, որի հիմքն արտագրվել է 1583 թվականին: Ուստի Ա. Տեկանցի հրատարակածը փաստորեն մի այնպիսի շարք է, որն ընդօրինակվել է Ն. Քուչակի կենդանության ժամանակ, որովհետև վերջինս մեռել է 1592 թվականին: Հետևապես Ա. Տեկանցի տպած շարքը կարող է դիտվել որպես հեղինակային բնագրին համեմատաբար մոտ գտնվող նմուշ: Այդ իսկ պատճառով էլ այդ շարքը, եթե իրոք այն պատկանում է Ն. Քուչակին, պիտի իրենից ներկայացնի մի ամբողջություն, դուրս չգա մեկ անհատի և մեկ դարի պատկանելու հնարավորության սահմաններից:

Պարզվում է, սակայն, որ այդ շարքը մի այնպիսի հավաքածու է, որ մտել են XIII—XIV դարերի հեղինակների գրած հայրենների նմուշներ, հին առանձին երգերից պոկված աներ, վաղ ժամանակներից եկող առանձին հայրենների աղավաղված (և ուշ շրջանի արդյունք հանդիսացող) վարիանտներ և այլն:

Ուստի ինքնին հասկանալի է, որ եթե Ա. Տեկանցի տպած շարքն այնպիսին է, ապա այն չէր կարող ու չի կարող գրվել մի անհատի անվան տակ, սեղմվել մի դարի նեղ շրջանակներում:

Այս երևույթը ցույց տալու համար բերենք մի քանի օրինակ:



Ասացինք, որ Ա. Տեկանցի տպած շարքում կան նաև հին, բոլորովին առանձին երգերից առնված բեկորներ<sup>1</sup>: Դրանցից մեկն է հետևյալ հայրենը.

Ծաղիկ աչն ծաղիկն կասեմ,  
Որ օձու բերանն է բուսեր,  
Լուկ մարդ ի յօձունն ահուն  
Չաչն ծաղիկն հոսն չէ սուեր.  
Մանուկ մի հոսմանց է կեր,  
Չարևուն թարիկին է սուեր,  
Զօձիկն արեէն հաներ  
Ու զծաղիկն բերնէն սուեր<sup>2</sup>:

Միջնադարյան ձևադրերից հայտնի է մի ընդարձակ բանաստեղծութուն՝ զիցարանական-քրիստոնեական թեմայով: Նրա մեզ ծանոթ երևք վարիանաներից մեկը կոչվում է «Տաղ ծաղիկի պալաասանի», մյուսը՝ «Տաղ ի վերայ Սաղայելի»<sup>3</sup>, իսկ երրորդն անխորազիր է: Հենց այս խորագրերը ցույց են տալիս, թե որքան հին պիտի լինի նրանց նախորինակը: Նույնն են վկայում նաև տաղի հեղինակի կամ մշակողի անվան բացակայությունը, ինչպես և նրանց տողերի և տների մեջ առկա տարբերությունները: Այդ ամբողջական բանաստեղծությունն ունի մի կաս սյուժե, որով և նրա բոլոր տները կապվում են միմյանց հետ: Ահա այդ հին ու ամբողջական երգի սկզբի տունն է, որ ստանց կրկնակի մաս է Ա. Տեկանցի տպած շարքը որպես առանձին հայրեն: Մեջ բերենք այդ երգի առաջին տները.

#### Տաղ ծաղիկի պալաասանի

Ծաղիկ աչն ծաղիկն սուեմ, հէ՛, ի՛մ տուն, հէ՛,  
Որ օձին բերնիկն է բուսեր, հէ՛, հէ՛, հէ՛,  
Եստ մարդ աչն օձին ահէն, հէ՛, ի՛մ տուն, հե՛,  
Չաչն ծաղիկն հոսն չէ սուէր, հէ՛, հէ՛, հէ՛:  
Մանուկ մի հոսմանց սանէն, հէ՛, ի՛մ տուն, հէ՛,  
Չարևա թարիկին է սուեր, հէ՛, հէ՛, հէ՛.  
Դնացէր զօձն ի քուն տեսեր, հէ՛, ի՛մ տուն, հէ՛,  
Չաչն ծաղիկն ի բերնէն սուէր, հէ՛, հէ՛, հէ՛:  
Ասէր ու սարերն կէր, հէ՛, ի՛մ տուն, հէ՛,  
Սարերուն հաւսար ցրցուցեր, հէ՛, հէ՛, հէ՛.  
— Մարե՛ր, ձեր վայրերդ սուեմ, հէ՛, ի՛մ տուն, հէ՛,  
Չեր մէջդ հանց ծաղիկ ո՞վ տեսեր, հէ՛, հէ՛, հէ՛...

Բանաստեղծութունն այսպես իր կուս սյուժեով շարունակվում է ևս 27 տող<sup>4</sup>:

<sup>1</sup> Այս երևույթը մասամբ նկատված է նաև նախորդ մասնագետների կողմից:

<sup>2</sup> Ա. վարդ. Տեկանց, Հայերդ, Թիֆլիս, 1882, էջ 34:

<sup>3</sup> Այս օրինակին ծանոթացել ենք վերջերս:

<sup>4</sup> Այդ բանաստեղծության լրիվ տեքստը տե՛ս «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» ժողովածուում, Երևան, 1956, էջ 268—271 (տե՛ս և այդ երգի ծանոթագրությունը):

Վերը նշվեց, որ Ա. Տեկանցի ապամ շարքում կան նաև առավել հին անհատական հայրեններ, որոնք գոյություն են ունեցել. երբ դեռ չկար ն. Գուչակը: Դրա ապացույթը արդեն հիշված XV դարում ընդօրինակված № 7773 ձեռագիրն է, ուր կա 49 ստանձին հայրենների մի ընդարձակ շարք՝ Հովհաննես Երզնկացու անունով: Ահա այդ շարքում գանձող շարք երկու ստանյակ հայրեններն են, որ սակա են Ա. Տեկանցի ապագրածում, և այդ շարքն է, որ համարյա ամբողջապես զանազան աղբյուրներից հավաքվելով մտել է Ա. Ղուկասյանի կողմած գրքի մեջ:

Ար այդ շարքը Գուչակինը չէ, պարզ երևում է ոչ միայն ձեռագրի ժամանակից (XV)<sup>1</sup>, այլև այդ շարքի խորագրից՝ «Յովհաննէս վարդապետի ասացեալ Պրուզ»: Նույնպիսի վկայություն կա նաև ուրիշ ձեռագրերում. այսպէս, № 516 ձեռագրում նույն շարքի խորագիրն է՝ «Այլ ասոց զեկեցի՛կ և լաւ Յովհաննէս վարդապետի ասացեալ», իսկ № 234 ձեռագրում այն համարվում է նորից «Երդ Պրուզ վարդապետի»: Այդ նույն շարքի մի այլ օրինակն է «Բաղմավէպ»-ում ապագրված և վերևում հիշատակված «Քուշակյան» այն նոր տաղաշարքը, որի հրատարակողը այն համարում է ժԳ—ժԴ դարերի արդյունք:

Ավելորդ չենք համարում այստեղ թվարկել Մատենադարանի № 7773 ձեռագրում ամփոփված հայրենների մի մասի սկզբնատողերը, որոնք կան Ա. Տեկանցի ապագրած շարքում:

«Օրհնեալ ասուածոյ անուն», «Էաւ մարդ ևս նարալ ասեմ», «Կաֆայ մի ասել կամիմ», «Կանթիղին մըտիդ արա», «Մարդն, որ յօտար տեղ երթալ», «Դաւիթ արքայի որդի», «Գանգատ ևմ ու խոց, կորարք», «Չորս բան աս խրատ լինէն», «Ջքս մեկքն իսկի մի՛ մսանար», «Երկուս ի մէկտեղ բերած», «Ձերկուս ընկեր ո՞նց պահեմ»... և այլն:

Ա. Տեկանցի ապամ շարքում գանձող հայրենների մեջ կան նաև այնպիսիները, որոնք ուրիշ ձեռագրերի համաձայն պատկանում են XIV դարի բանաստեղծ Հ. Թլկուրանցուն, ոմն Անտոնի և ուրիշներին: Այսպէս, օրինակ, Հ. Թլկուրանցու անունով հայանի շարքի սկիզբն է.

Երկինք որոտայ դողաց,  
Ատաղն իւր տեղն չի մնաց,  
Իմ կարն այլ լիտնէ գրնաց,  
Իւր հազար ծաղկունք հետըրաց...<sup>2</sup>

Այդ նույն հայրենը կա նաև Ա. Տեկանցի ապամ շարքում.

Երկինք որոտայ դողաց,  
Ատաղն իսկի ի տեղն չմնաց,  
Իմ կար, երբ լիտնէ կլար,  
Իւր հազար ծաղկունք ի հարաց...<sup>3</sup>

<sup>1</sup> Այդ ձեռագրի տարեթիվը չի պահպանվել. հնագրական տվյալներով այն պատկանում է XIV—XV դարերին: Եթե անգամ ընդունենք, որ այն ընդօրինակվել է XVI դարում, զարձալ խնդիրը չի փոխվի, որովհետև հարց կառաջանա, թե ինչո՞ւ Քուշակի կենդանության ժամանակ այդ շարքը գիտվում էր որպէս ոչ թե նրա, այլ XIII—XIV դարերի հեղինակ Հ. Երզնկացու (Պրուզ) ստեղծագործություն:

<sup>2</sup> Արտավազդ արքեպ. Սյուրմեյան, Յուշակ հայերէն ձեռագրաց հալէպի, Երուսաղեմ, 1935, էջ 382:

<sup>3</sup> Ա. վարդ. Տեկանց, Հայերդ, էջ 40:

Ա. Տեկանցի հրատարակած շարքի մեջ մեծ թիվ են կազմում նաև այն հայրենները, որոնք առավել հին հայրենների աղավաղված, աղճատված օրինակներ են. ուստի դրանք ևս արամարանորեն երբեք չեն կարող դիտվել որպես Ն. Քուչակի կենդանության օրոք ստեղծված և նրան պատկանող երգեր: Այդպիսի աղճատման, աղավաղումների համար շատ երկար ժամանակ էր պետք: Այնպես, Ա. Տեկանցի ապառ շարքի կազմողը պատկերացում անզամ չի ունեցել նշված հայրենների նախօրինակների մասին: Այսպես, քննարկվող շարքի 312—319-րդ սողերն են.

Ես ասեմ ու դուն լսէ,  
Աս ի քո մաաքունքդ լանդիճէ.  
Օ՛ղ արա, ականջդ դիր,  
Ձէա կարմիր դեկան ծրարէ.  
Այն մարդն ի լսէչ մի՛ նստիր,  
Երբ երթաս՝ դքեղ զրուցէ,  
Ձնեան լեա քեղ նեաէ  
Ու դագեղն դառնալ պահէ<sup>1</sup>:

Հենց սկզբից այս հայրենը պահասափոր է թվում: Եվ հիրավի, նույն շարքի մեջ (142—149-րդ սողեր) հանդիպում ենք մի ուրիշ հայրենի, որի հիման վրա ծնվել է այս հայրենի մի մասը: Ահա այդ օրինակը.

Կասեմ թէ հայրէն ասա,  
Թէ չէ ևս ասեմ դուն լսէ.  
Ձրերանդ ալ քննով ածէ  
Ու դականջդ ալ ի գոց դու պահէ.  
Ձէա օղ ի ականջդ առ,  
Ձէա կարմիր դեկան ծրարէ.  
Այն մարդ, որ շատ կզուրցէ  
Նա լեաին խօսքն կու լսէ<sup>2</sup>:

Չնայած այս երկու հայրենները նույն հիմքի վրա են չափված և նրանց մեջ առկա են նույնական սողեր, սակայն այստեղ դործ ունենք երկու առանձին խրատի հեա: Առաջինն զզուշացնում է նենգ մարդուց, իսկ երկրորդը խորհուրդ է տալիս քիչ խոսել ու ամեն բան չլուր: Ուստի, առաջին հայրենը երկրորդից վերցրել է միայն ձևական որոշ մոմենտներ, իսկ նրա հիմնական միտքը չի վերցրել: Այստեղ նա հիմք է ունեցել մի ուրիշ հայրեն, որը գտնվում է ոչ թե տվյալ շարքում, այլ ուրիշ շարքերի մեջ.

Ձմարդն, որ սիրելի անեա,  
Նա դասը գինքն փնտուէ,  
Հեա ան մարդուն մի նստիր,  
Երբ ելնէ դքեղ զրուցէ,  
Ձնեան մահու ձղէ

<sup>1</sup> Ա. վարդ. Տեկանց, Հայերդ, էջ 31:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 29:

Ու զագեղն գառնայ պահէ.  
 Զարինդ գէա շար վաթէ  
 Դառնայ մէկ խօսօք վճարէ:

Իսկ սա արդեն մի խրատական ինքնուրույն, չաղճատված հայրեն է՝ հայտնի բողմաթիվ ձևապրերից՝<sup>1</sup> մեծ մասամբ Ֆրիկի, մասամբ նաև Հ. Երզրնկացու անունով:

Պարզ է, որ այս վերջին և երկրորդ հայրենները եղել են տանձին ինքնուրույն գործեր, ծնված շատ ավելի վաղ, քան Ա. Տեկանցի ապագրած շարքի նախապատիարը, որոնցից հետագայում, դարձյալ ավելի վաղ քան 1583 թվականը, բերանացի տարածման ճանապարհով, առաջացել է մեր քննած առաջին օրինակը: Հետևապես նրանց պատմությունը առավել հին է, քան XVI դարը:

Հիշենք մի ուրիշ փաստ ևս. Ա. Տեկանցի ապագրած շարքում կա մի այսպիսի հայրեն.

Դարձաւ ինձ ճուղապ արաւ.  
 Զքեղ մեղաց ալիքն է թացեր,  
 Շատ մարդ ի լայս ծովդ ընկեր,  
 Մոլորեր ու անհուն կորեր.  
 Եղեր մօտեցեր եմ ևս,  
 Վախենամ քարի դիպենամ.  
 Քակի իմ աղւոր շինուածս,  
 Ու տախտակն մէկմէկանայ:

Հայտնի է, որ եթե տվյալ հայրենը հանդավոր է, ապա պիտի հորինված լինի նույն հանգով: Այստեղ, սակայն, այդպես չէ. առկա են երեք տեսակ հանգեր («եր», «ամ», «այ»): Կնշանակի այս հայրենը նույնպես տարբեր հայրենների մի խառնուրդ է: Դա երևում է նաև քննվող հայրենի սկզբից, որ միտքը պակասավոր է:

Սկզբնաղբյուրներում պահպանված է նաև այս նմուշի հիմքում ընկած հին օրինակը.

Աշխարհս է ի ծով նըման,  
 Ով որ գալ անթաց չի մնալ.  
 Յայս ծովս ևս ի նաւ մտալ,  
 Դընաց նաւս և ևս չիմացալ.  
 Յեզրը մօտեցել եմ ևս,  
 Վախեմ թէ քարի դիպենայ,  
 Քակաի իմ աղւոր շինուածս,  
 Ու տախտակըս մէկմէկանայ:

Ահա, այս հայրենի վերջին մասն է, որ մեխանիկորեն կցվել է մի այլ հայրենի վերջին տողերին՝ տալով Ա. Տեկանցի շարքում գտնվող նմուշը:

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, ձեռ. №№ 516, 3081, Երուսաղեմի՝ № 1455, Վենետիկի՝ № 1371 և այլն:

<sup>2</sup> Ա. վարդ. Տեկանց, Հայերգ, էջ 39:

Պարզ է, որ նշված հին հայրենը XV դարի արդյունք չէ և ն. Քուչակի գործ համարվել չի կարող, մանավանդ, որ այն գտնվում է բազմաթիվ ձևազրկում և վերագրվում է Հ. Երզնկացուն: Ավելին, այդ ձևազրկերից մեկը՝ N 7773-ը, վերոհիշյալ XV դարի գրչությանը պատկանող ձևազրկն է:

Վերջապես հիշենք փաստերի մի ուրիշ խումբ ևս, որը ցույց է տալիս, թե ինչպես Ա. Տեկանցի տպագրած շարքի մեջ կան նույն հայրենի այնպիսի նեոավոր ապրերսիվներ, որոնք կարող էին գոյանալ միմիայն գարերի ընթացքում և բանավոր տարածման ճանապարհով:

Օրինակ, նշված շարքի 53—64-րդ տողերն են.

Գիշերս ևս ի քուն էի  
Յիմ հալալ տեղացն ի վրայ.  
Լուսին ալ կամար կապեր  
Յիմ ճոհար անձկանն ի վրայ:  
— Այ իմ բարձր ու բոլոր լուսին,  
Շատ բարն տար իմ խօշ կարին,  
Ջգունն ալ նշանով ասեմ՝  
Բարձր պատ ու ծառն ի միջին.  
Նստեր է ծառի շքին,  
Կիմէ զիւր լուրջ ապիկին.  
Կիմէ ու հայերէն կասէ,  
Թէ. Ի՞նչ անուշ է սէրն ու գինին<sup>1</sup>:

Այս նույն հայրենի ժողովրդական ծագում ունեցող մի հեռավոր վարիանտն է նույն շարքի 1165—1179-րդ տողերում ամփոփված հետևյալ օրինակը.

— Իմ բարձրագնաց լուսին,  
Շատ բարն տար իմ կիւղէլին:  
— Ջրարեզ ևս ի ս'ւր տանեմ,  
Չե՛մ գիտեր գտունն կիւղէլին:  
— Գնա ի վերայ թաղին  
Բարձր պատ ու ծառն ի միջին.  
Նստեր ի ծառին շքին,  
Կիմէ ի լուրջ ապիկին.  
Կու իմէ ու հայերէն կասէ.  
Թէ. Ի՞նչ անուշ է սէրն ու գինին<sup>2</sup>:

Այդ երկու հայրենների մի ավելի հեռավոր, բայց հարազատ տարբերակն է նաև նույն շարքի հետևյալ նմուշը (1180—1187-րդ տողերը).

Իմ բարձրագնալ լուսին,  
Ձի տեսար զիմ կար մշկցին:

<sup>1</sup> Ա. վարդ. Տեկանց, Հայերգ, էջ 28:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 44:

— Էրէկ ևմ տեսեր զքո ևարն  
 Ի յայցին Յակոբոսին.  
 Ետեսր ի վարդի շքին,  
 Կու խմէր զկարմիր զինին,  
 Խմէր, ողորմակ կասէր՝  
 Շատ բարև տարէք իմ ևարին<sup>1</sup>:

Մենք կարող ենք շարունակել այս և նման օրինակները, սակայն այսօր քանն էլ բավական է վերջնականապես պնդելու, որ Ա. Տեկանցի հրատարակած շարքը ոչ թե XVI դարի աշուղ Ն. Բուչակինն է, այլ ժողովրդական հին հայրեններից, Փուչակից պարերով առաջ ապրած տարբեր բանաստեղծների ստեղծագործություններից, ինչպես և անհայտ գանազան երգիչների տարբեր գործերից առնված նմուշների մի խառն հավաքածու, որը ոչ մի հեղինակի անուն կրել չէ՛ր կարող, չի՛ կրել, ու երբե՛ք չի կարող համարվել սուս XVI դարի արդյունք:

Եթե Ա. Տեկանցը բանասիրական անմեղ թուլաթլամբ հակում է ունեցել մեր բանասիրության խանձարարչին օրերին այդ շարքը վերադրել, ինչպես Մ. Աբեղյանն է ասել, իր հայրենակցին, ապա այսօր հասել է մասնակի մեկընդմիջ հրաժարվելու այդ թվուրիմացությունից:

Տեղի սղություն պատճառով հնարավորություն չունենք խոսելու մեր կատարած այլ որոնումների արդյունքների մասին, սրուցից են, օրինակ. հայրենների շարքերի համեմատական քննությունը, կաֆաների հարցը, X—XVI դարերի պոեզիայի և հայրենների առնչությունը, Ն. Քուչակի սեփական բանաստեղծությունները և այլն: Իսկ զբանք զայլս են ոչ միայն մի անգամ ևս իսպառ հերքելու Փուչակի անվան հետ առնչված առասպելը, այլև մեծապես նպաստելու հայրենների հարուստ գանձարանի գիտական ուսումնասիրության գործին:

Արդ, ամփոփելով մեր խոսքը կարող ենք ասել հետևյալը.

Հայրական միջնադարյան պոեզիան հնուց ի վեր ունեցել է ինքնատիպ երգերի մի ուրախ ճյուղ, որը հայանի է հայրեններ անունով և իր ակունքներով սերում է ժողովրդական բանահյուսության անապատ գանձարանից: Ժողովրդական հայրենները հատկապես զարգանում են X—XIV դարերում: Այդ բազայի վրա փարթամորեն աճում են ժողովրդական անանուն երգիչների՝ գուսանների ստեղծած նորանոր զոգարիկ հայրենները, որոնց մի մասը նույնպես հետագայում ժողովրդականացել է: Այդ բոլորին զուգընթաց գրավոր դպրությունն էլ սկսում է օգտվել ժողովրդական-գուսանական հայրենների գանձարանից և հարստացնել այն: Դեռևս X դարում Գր. Նարեկացին է օգտվում զբանից, ապա հայանի ևն Գր. Ապրիստրոսի, Գր. Վիլյասերի, Ն. Շնորհալու, Գր. Տղալի առավել ուշադրով փորձերը:

XIII—XIV դարերում հայրենների հոսանքը ուժգնորեն թափանցում է նորանոր երգիչների՝ Հովհ. Երզնկացու, Ֆրիլի, Խոչ, Կեչառեցու, Վարդան Բարձրբերդցու, Հ. Թլիսուրանցու ստեղծագործությունների մեջ, որոնք ստեղծում են հայրենների նորանոր շարքեր: Արդ մասնատրամից սկիզբ է առ-

<sup>1</sup> Ա. վարդ. Տեկանց, Հայերգ, էջ 44: Եռչնը կարող ենք ասել նաև այդ շարքի 406—413, 592—599 և 414—421-րդ տողերի և ուրիշների մասին:

նում հայրենների մի տարատեսակը՝ կաֆա անունով՝ որն աստիճանաբար ողողում է Ադ. Մակիդոնացու, Պոնոսի քաղաքի, Փահլուլ թագավորի, Մանկան և աղջկան պատմությունների էջերը։ Նորանոր հայրենների գոյացումը և եղածների փոփոխումն ու վարդապետներ չնայած հարատևում է մինչև XVI դարը, սակայն XVII դարից սկսած աստիճանաբար նկատվում է տեղատվություն՝ հավանաբար աշուղական գրականության և այլ գրականությունը պայմանավորող պատմական պայմանների պատճառով։ Այնուամենայնիվ այդ պոեզիան սպրտում է մինչև XIX—XX դարերը, որի մեծարժեք փայտություններն են Ակնի անտոնիները, հայրենները, Վանի, Բաղեշի և այլ վայրերի ժողովրդական բանահյուսություն համապատասխան նմուշները։

Միջին դարերում երգիչները և անհատ հեղինակները սովորություն են ունեցել հայրենների փերոհիշյալ բնդհանուր գանձարանից բնորել գանձազան նմուշներ և տարածել որպես ստանձին շարքեր։

Մանուկ այն մանկանն ստեմ,  
Որ ընտրի զհայրենն ու սսէ...  
Երեսեմ, շատ հայրեն գիտես,  
Լուկ ընտրի ու մէկ մի սաս...

Ահա այս ճանապարհով էլ ստաօ են եկել խառն շարքեր, որոնց մեծ տոկն են ժողովրդական, գուսանական և անհատական հայրենների նմուշները՝ Հենց ալլապիսիներից մեկն է Ա. Տեկանցի տպագրածը։

Ինքնին հասկանալի է, որ հայրենների այս բնդհանուր գանձարանի մշակումն ու ուսումնասիրությունը փերին աստիճանի գոյություն, համբերատար ու անհրաժեշտ մի գործ է։ Երա համար, ամենից ստաօ, անհրաժեշտ է ունենալ բոլոր հայրենների և նրանց հետ կապվող ուրիշ շարքերի անփոփոխ ու անաղարտ հրատարակությունը։

Յարդ հայրենների ալլապիսի ժողովածու չկա, որի հանդես գալուն անպարման պիտի հաջորդի նաև հայրենների խառն շարքերից գոյված և ի մի հավաքված ստանձին նմուշների գիտա-համեմատական տեքստերի հրատարակությունը, որի անդրանիկ և հաջող փորձը Մ. Արեղյանի «Գուսանական ժողովրդական ապեր» ժողովածուն է։

Եսնի որ մինչև օրս նման ժողովածուներ չեն եղել, բնականաբար, հայրենների ուսումնասիրության ժամանակ կարող էին հանդես գալ նաև թյուր կարծիքներ և շփոթություններ։ Հենց ալլապիսին է ամբողջ կես դարից ավելի տեղ քուչակյան ստասպելը։ Մ. Արեղյանը ժամանակին հիմնական դժերով լուծել է հայրենների և Դուչակի հետ կապված այլ թյուրիմացությունը։ Ինու՞մ է միայն խորացնել և վարդապետներ նրա աշխատանքը, խուսափելով նրա մասնակի վրիպումներից, բացերից, որոնք իր ժամանակին անխուսափելի էին։

Ա. Նուրախյանը և նրա նման մասնագետները հայրենների ուսումնասիրությունը սկզբունքորեն ոչ միայն սխալ բնթայքի մեջ են գնում, այլև մեծապես ետ են մղում այն գիրքերից, որին այն հասել է մի քանի տասնամյակների բնթայքում։

<sup>1</sup> Ո՛չ բոլոր կաֆաներն են հայրենն։

## ОБ „АЙРЕНАХ“ И НААПЕТЕ КУЧАКЕ

АС. МНАЦКАНЯН

(Резюме)

Средневековая армянская народная поэзия имела своеобразный жанр — „айрены“. По примеру последних гусаны и поэты, начиная с X—XIV вв., создавали свои „айрены“. Певцы и переписчики, распространяя эти стихи, создавали их новые ряды. К ним систематически примешивались вновь сочиненные „айрены“, а также их разные варианты. К сожалению, до сих пор точно не установлено, когда и какими авторами они созданы. В 1882 г. А. Тевканц, встретив в одной рукописи ряд таких анонимных „айренов“, без всякого основания приписал их поэту XVI в. Наапету Кучаку. Несмотря на возражения некоторых исследователей — К. Косганяна, Н. Акиняна и др., традиция считать „айрены“ творчеством Кучака продолжалась и углублялась. В 1931 г. этим вопросом занялся крупнейший арменовед М. Абегиан. Он доказал, что они сочинены в различные века и не имеют ничего общего с творчеством Н. Кучака, что они возникли и развились, в основном, в X—XIV вв., т. е. тогда, когда Н. Кучак еще и не родился. Однако Айпетрат недавно издал новый сборник „айренов“, в котором они опять приписаны Н. Кучаку. Составитель сборника А. Гукасян, не приводя каких-либо серьезных доказательств, склонен считать, что все произведения этого жанра написаны Н. Кучаком. Между тем имеются неопровержимые факты, подтверждающие мнение М. Абегиана. Так, например, в том же сборнике Айпетрата и в напечатанных А. Тевканцом стихотворениях содержатся „айрены“, встречающиеся в рукописях Матенадарана №№ 7773 и 2961, одна из которых составлена за сто, а другая за триста лет до рождения Н. Кучака. Эти „айрены“ принадлежат Н. Шнорали (XII в.), О. Ерзикаци (XIII—XIV вв.) и другим поэтам. В сборнике Айпетрата и в стихотворениях, опубликованных А. Тевканцем, имеются произведения, источником которых являются древние „айрены“, а некоторые из них представляют отрывки из совершенно других стихотворений.